

28.07.17	558-Ա	ԼՂՀ կառավարության 2017թ. մարտի 14-ի N 162-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ԼՂՀ կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին
----------	-------	---

14 մարտի 2017 թ.

N 162-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման 16-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2017 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի մարտի 14-ի
N 162-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2017 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է խթանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի պահպանումն ու վերարտադրությունը:

2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առկա ջրավազանների ձկնային համակեցությունները (Մատաղիսի ջրամբար), որտեղ նախատեսվում է իրականացնել ձկան պաշարների պահպանություն և արհեստական վերարտադրություն, բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով, որոնք թույլ են տալիս խոսել դրանց յուրահատուկ լինելու մասին:

80-ական թվականներին ձկան պաշարի պարբերաբար կերակրման հետևանքով ջրամբարների (կոնկրետ Մատաղիսի) ձկնարդյունավետությունը զգալի չափով մեծացել է: Սակայն, որպես դոմինանտ, հանդես են եկել ձկների կլիմայավարժեցված տեսակները: Ներկայումս էկոլոգիական պրոցեսների հետևանքով ջրավազանների ձկնարդյունավետությունը խիստ նվազել է, որն էլ հիմնականում հանգեցրել է ջրավազանների արդյունավետության նվազմանը, մասնավորապես ձկների կերային բազայի (կենդանական պլանկտոնի և կենդանական բենթոսի): Ներկա դրությամբ դոմինանտ ձկնատեսակ կարելի է համարել կարասը, որը շարունակում է իր զարգացումը, ինչը ջրավազանների էկոհամակարգերի համար հղի է լուրջ հետևանքներով, քանի որ այդ ձկնատեսակը դարձել է լուրջ մրցակից էնդեմիկ ձկնատեսակների համար՝ որպես սնունդ օգտագործելով վերջիններիս ձկնկիթն ու մանրաձուկը:

Ծրագրի շրջանակներում էնդեմիկ ձկների վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան միջոցառումներ կարասի

արդյունավետությունը նվազեցնելու և հակառակը ծածանագգիների և էնդեմիկ տեսակների քանակն ավելացնելու ուղղությամբ:

Ջրավազանների էկոհամակարգի կայուն զարգացման և իրավիճակը վերահսկելու համար ադապտացված տեսակների պահպանությանը զուգընթաց միաժամանակ ծրագրով նախատեսվում է նաև էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի պահպանություն, ինչպես նաև նախատեսվում է ձեռք բերել 2.8 տոննա ծածանի մանրածուկ և բաց թողնել Մատադիսի ջրամբարում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, այդ թվում`

Մանրաձկան տեսակը	Քանակը (կիլոգրամ)	Գինը (ձեռքբերում, տեղափոխում, բաց թողում) (ՀՀ դրամ)	Ընդամենը (հազար դրամ)
Ծածան	2 777	1 800	5000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ